



**EU4Climate**  
Better Climate Policies for Eastern Partner Countries

**SGP** The GEF  
Small Grants  
Programme

**ECOLUR**  
NEW INFORMATIONAL POLICY IN ECOLOGY



**ՀՀ ԼՈՌՈՒԻ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ  
ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ  
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**



*Սույն փաստաթուղթը կազմվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԳ-ի կողմից իրականացված «Ազդակիր համայնքները և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները որպես Հայաստանի էներգետիկայի և կլիմայի փոփոխության քաղաքականության մեջ սոցիալ-էկոլոգիական մշակույթի ներդրման մասնակիցներ» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է «ԵՄ-ն կլիմայի համար» տարածաշրջանային ծրագրի և ՄԱԶԾ/ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի աջակցությամբ:*

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	3
Մեթոդաբանություն	4
1. Փամբակ համայնքի ընդհանուր նկարագիրը	5
2. Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման և Փարիզյան համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները Փամբակ համայնքում	10
3. Էներգիայի տեղական արտադրություն և հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ	11
4. Անտառային տնտեսություն	15
5. Արդյունաբերություն	18
6. Կոմունալ ծառայություններ և թափոններ	21
7. Համայնքի հողային ռեսուրսներ	23
8. Համայնքային բյուջեի մասին	24
9. Համայնքի սուբվենցիոն ծրագրերը և հայտերը	26
10. Փամբակ համայնքի 2022-2027թթ. զարգացման ծրագիրը	27
11. Միջազգային համագործակցություն	28
12. Եզրակացություն	29
13. Առաջարկություններ Փամբակի ՏԻՄ-ին	31
Հավելված 1	34
Հավելված 2	35

## ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը ուշադրության կենտրոնում է պահում կլիմայական, վերականգնվող էներգետիկայի, էներգաարդյունավետության և էներգախնայողության քաղաքականությունների իրականացումը: Այդ քաղաքականությունների մշակման և արդյունավետ իրականացման գործում կարևոր է համայնքների ներգրավումը: Սակայն ինստիտուցիոնալ առումով համայնքները լիարժեք չեն մասնակցում այդ քաղաքականությունների կյանքի կոչման ծրագրերին: Փամբակ համայնքում իրականացվում են հանքարդյունաբերական, էներգետիկ ծրագրեր, անտառային, կոշտ կենցաղային թափոնների կառավարման քաղաքականություններն ապահովող ծրագրեր:

**«ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և առաջարկվող միջոցառումները»** հաշվետվության նպատակն է.

- Նպաստել Փամբակ համայնքի լիարժեք ներգրավմանը և իր շահերի պաշտպանությանը կլիմայական և էներգետիկայի ոլորտների պետական քաղաքականությունների վերաբերյալ որոշումների և համայնքին վերաբերող որոշումների ընդունման գործընթացում:
- Աջակցել համայնքի սոցիալական, էկոլոգիական և տնտեսական զարգացմանը՝ հասնելու կլիմայական արդարության և էներգետիկ աղքատության կրճատման:
- Մշակել առաջարկություններ համայնքի կլիմայի փոփոխության հարմարվողականության, կանաչ էներգետիկայի և կանաչ աշխատատեղերի ստեղծման, համայնքի կայուն զարգացման համար:

**«ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքում էներգետիկայի և կլիմայական դիմակայության քաղաքականության ներդրման խնդիրները և առաջարկվող միջոցառումները»** հաշվետվության կառուցվածքը

1. **Փամբակ համայնքի ընդհանուր նկարագիր բաժնում** ներկայացված է համայնքի աշխարհագրական դիրքի, կլիմայի մասին տեղեկատվություն, բնակչության զբաղվածությունը:
2. **Կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման և Փարիզյան համաձայնագրով ՀՀ ստանձնած պարտավորությունների իրականացման նախադրյալները Փամբակ համայնքում** բաժնում ներկայացված են կայուն էներգետիկ և կլիմայական զարգացման պլանավորման հնարավորությունները:
3. **Էներգիայի տեղական արտադրություն և հանրային շենքեր, շինություններ և օբյեկտներ** բաժնում ներկայացված է տեղեկատվություն Փամբակ համայնքում սպառվող/օգտագործվող էներգետիկ ռեսուրսների, համայնքում իրականացվող էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրերի, փոքր ՀԷԿ-երի խնդիրների, իրավակարգավորումների, առաջարկվող լուծումների մասին:
4. **Անտառային տնտեսություն** բաժնում ներկայացված են «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի անտառտնտեսության Եղեգնուտ և Գուգարք անտառպետության ապօրինի անտառօգտագործման հետևանքով առաջացած խնդիրները, անտառվերականգնման միջոցառումները:

5. **Արդյունաբերություն** բաժնում ներկայացված են համայնքում գործող ընդերքօգտագործմամբ զբաղվող ընկերությունների տվյալները, սոցիալ-էկոլոգիական ազդեցությունը և պարտավորությունները, իրավակարգավորումների բացերը և առաջարկվող լուծումները:
6. **Կոմունալ ծառայություններ և թափոններ** բաժնում ներկայացված են համայնքում կոշտ կենցաղային թափոնների հեռացման և աղբահանության իրավակարգավորման բացերը և առաջարկվող լուծումները:
7. **Համայնքի հողային ռեսուրսներ** բաժնում ներկայացված են հողային ռեսուրսների մասին տվյալներ, աղտոտվածության վերաբերյալ տվյալներ, հանքավայրերի երկարատև շահագործման հետևանքով հողերի շարունակական դեգրադացման խնդիրները:
8. **Համայնքային բյուջեի մասին** բաժնում ներկայացված է Փամբակ համայնքի 2023թ. բյուջեի նկարագիրը:
9. **Համայնքի սուբվենցիոն ծրագրերը և հայտերը** բաժնում ներկայացված է տեղեկատվություն 2022-2023թթ. սուբվենցիոն ծրագրերի կլիմայական և էներգետիկ ուղղվածության մասին, դրանց համար պահանջվող համայնքային և պետական համաֆինանսավորման չափերի մասին տվյալներ:
10. **Փամբակ համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագիր** բաժնում վերլուծված են Փամբակ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ուղղվածության ծրագրերը և դրանց իրականացման հնարավորությունները:
11. **Միջազգային համագործակցություն** բաժնում ներկայացված են միջազգային կազմակերպությունների աջակցությամբ իրականացվող ծրագրերը՝ ուղղված բնության պահպանությանը և համայնքի կայուն զարգացմանը:
12. **Եզրակացություն** բաժնում ներկայացված են Փամբակ համայնքում կլիմայական և կանաչ էներգետիկայի քաղաքականության տեղայնացման խնդիրները:
13. **Առաջարկություններ Փամբակի ՏԻՄ-ին** բաժնում ներկայացված առաջարկություններ՝ ուղղված Փամբակի ՏԻՄ-ին:
14. **Հավելվածներ:**
  - Հավելված 1:** Փամբակ համայնքի վարչական տարածքում շահագործվող ՓՀԷԿ-երը և դրանց հիմնական բնութագրիչները
  - Հավելված 2:** Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ:

## ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետվության կազմման տեղեկատվական հենք են ՀՀ կառավարության, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության, ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ՀՀ Լոռու մարզպետարանի, Փամբակ խոշորացված համայնքի պաշտոնական կայքերը, էներգետիկայի և կլիմայի փոփոխության ոլորտների վերաբերյալ ազգային և միջազգային համապատասխան իրավական ակտերը, փաստաթղթերը: Համայնքի մասնակցությունն ապահովելու, կարծիքների և առաջարկությունների ձևավորման նպատակով օտագործվել են հաղորդակցության տարբեր միջոցներ՝ անմիջական շփումներ, հարցազրույցներ, քննարկումներ, ինչպես նաև հարցումներ

ուրրտային մասնագետների, ֆոկլուս խմբերի և ՏԻՄ-ի հետ: Քննարկումներին մասնակցել է 56 մարդ, հարցազրույց անցկացվել է 9 անձի հետ, հարցումներին մասնակցել է 22 անձ:




**Նկար 1. «ԷկոԼուր»-ի թիմի հանդիպումը Փամբակի ՏԻՄ-ի, վարչական ղեկավարների, տեղի ՀԿ-ների և բնակիչների հետ**

**1. ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Փամբակ համայնքն իր մեջ ներառում է 18 գյուղ՝ Անտառամուտ, Արջուտ, Ագնվաձոր, Բազում, Գուշար, Դեբետ, Չորագետ, Չորագյուղ, Եղեգնուտ, Ժամատուն, Ծաղկունք, Լեռնաջուր, Լեռնապատ, Մարգահովիտ, Քարաբերդ, Վահագնի, Վահագնաձոր և Փամբակ: Համայնքի կենտրոնը Փամբակ բնակավայրն է:

Համայնքի վարչական տարածքի մակերեսը 56967,63 հա է:

Համայնքում հաշվառված բնակչության թիվը 2021թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 13215 մարդ, ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը՝ 506 է, կենսաթոշակառուների թիվը՝ 1793, հաշմանդամություն ունեցողների թիվը՝ 498: Բնակչության 38 %-ը սոցիալապես անապահով է, 8 %-ը ծայրահեղ աղքատ:



## **Նկար 2. Փամբակ համայնքի ընդհանուր պատկերը<sup>1</sup>**

Համայնքի Մարզահովիտ բնակավայրում են գտնվում «Մարզահովիտ» և Կովկասյան մրտավարդենու արգելավայրերը:

Համայնքում տարեցտարի զարգանում է զբոսաշրջությունը, որին նպաստում է բարենպաստ կլիման և բնությունը: Փամբակ համայնքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, եկեղեցիներով:

Փամբակում գյուղատնտեսության ոլորտը լուրջ խնդիրների հետ է բախվում: Ոռոգման ցանցը քայքայված է: Խոտհարքները և արոտավայրերը դեգրադացված են: Դաշտամիջյան, հեռագնա արոտավայրերի ճանապարհները ոչ բարվոք վիճակում են: Գյուղատնտեսական տեխնիկան մաշված է կամ իսպառ բացակայում է:

Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրատեսակներն են կարտոֆիլը, ցորենը, գարին, միսը, կաթը, բանջարաբոստանային կուլտուրաները, պտուղները, մեղրը: Համայնքում ստեղծված «Ձորի հասկ» գյուղատնտեսական կոոպերատիվը, որն ունի 20 անդամներ Դեբետ, Եղեգնուտ, Ձորագյուղ և Վահագնի գյուղերից, նպաստում է գյուղատնտեսության զարգացմանը:

Համայնքով անցնում են Փամբակ, Ձորագետ, Չանախչի (Ալարեքս) գետերը, ինչպես նաև Աղստև գետի փոքր հատվածը:

Համայնքում ջրամատակարարման և ոռոգման խնդիրների լուծման համար սկսել են աշխատանքներ Դեբետ, Լեռնապատ և Վահագնի բնակավայրերում:


«ԷկոԼուր»-ի իրականացրած հարցումների վերլուծության համաձայն՝ բնակիչները պատրաստ են անցնելու խմելու ջրի ջրաչափային համակարգի, մինչդեռ դեմ են ոռոգման համակարգում դրանց ներդրմանը, քանի որ ունեն սեփական ջրագծեր և մագիստրալներ:

Կլիմայական և կանաչ էներգետիկայի ծրագրերի իրականացման համար Փամբակ համայնքը համագործակցում UNICEF-ի և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ, իրականացնում են այլընտրանքային զարգացման նախակրթարանի կառուցում: GIZ-ի և WWF-Հայաստանի, «Իմ անտառ Հայաստան», «Էյ Թի Փի» կազմակերպությունների հետ իրականացնում են բնապահպանական ծրագրեր, որոնք ունեն տնտեսական բաղադրիչ: Ունեն մշտական համագործակցություն «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) հետ՝ Դեբեդի դպրոցի կառուցում, անհատույց տրանսպորտի տրամադրում: ՀՀ սոցիալական ներդրումների հիմնադրամը համայնքում իրականացնում է աղբահանության խթանման ծրագիր: Ձեռք է բերվել 2 աղբատար մեքենա, 1 ինքնաթափ մեքենա, 80 աղբաման, 1 տրակտոր:

### **1.1 Բնակչության զբաղվածությունը**

<sup>1</sup> <https://www.google.com/maps/>

Ըստ Փամբակ համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագրի<sup>2</sup> համայնքի բնակչության ընդհանուր թվաքանակից զբաղվածների թիվը կազմում է 42%: Հիմնականում զբաղվում են գյուղատնտեսությամբ՝ դաշտավարությամբ, պտղաբուծությամբ (տանձ, խնձոր, սալոր), մշակում են հացահատիկային, կերային, բանջարաբուստանային կուլտուրաներ, խոշոր եղջերավոր անասնաբուծությամբ, մեղվաբուծությամբ: Փամբակ համայնքի զարգացման այլընտրանքային տարբերակների վերաբերյալ հարցվածների կարծիքները բաշխվել են հետևյալ համամասնությամբ.



**Նկար 3. Համայնքի զարգացման հեռանկարների վերաբերյալ կարծիքների բաշխումը**

**1.2 Համայնքի կլիման**



**Նկար 4. Փամբակ համայնքի Մարգահովիտ բնակավայր**

<sup>2</sup> [https://www.pambak.am/upload/DocFlow/Projects/Tu2211151703258191\\_.pdf](https://www.pambak.am/upload/DocFlow/Projects/Tu2211151703258191_.pdf)



Համայնքի կլիման խոնավ է, տեղումնառատ, մեղմ ձմեռներով ու զով ամառներով: Օդի միջին ջերմաստիճանը ձմռանը տատանվում է -3 աստիճանից մինչև -25 աստիճան ըստ ցելսիուսի, ամռանը՝ +14-ից +30 աստիճան: Բնակավայրերում տարեկան միջին տեղումների քանակը տարբեր է, տատանվում է 300-700 մմ սահմաններում:

Փամբակ համայնքի կլիմայական պայմանների վերլուծություն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը չի իրականացնում:

Համայնքում «ԷկոԼուր»-ի իրականացրած հարցումների վերլուծության համաձայն՝ կլիմայի փոփոխությունը համայնքի վրա թողել է բացասական ազդեցություն, ինչն արտացոլվում է ոռոգման ջրի նվազմամբ, մրգերի, մշակովի և վայրի հատապտուղների, կարտոֆիլի, մեղրի բերքատվության անկմամբ: Արոտավայրերում խոնգների ոչ բավարար քանակության, խոտհարքների և անասնակերի պաշարների նվազման պատճառով ընտանի խոշոր և մանր եղջերավոր անասունների թիվը կրճատվել է, կաթնատվությունը՝ նվազել: Մարդկանց առողջական վիճակը վատթարացել է: Տնային տնտեսությունների եկամուտները նվազել են: Ըստ որոշ բնակիչների՝ վերջին տարիներին աճել են ցորենի ցանքսատարածքները, կան ձիաբուծության զարգացման միտումներ:

Գյուղացիները չեն կարողանում իրականացնել գյուղատնտեսական ապահովագրություն 1 հա-ից փոքր հողատարածքներում, քանի որ կա սահմանափակում ապահովագրական ընկերությունների կողմից: Արդյունքում գյուղացին չի կարողանում պաշտպանվել այնպիսի կլիմայական ռիսկերից, ինչպիսիք են կարկուտը, ցրտահարությունը, երաշտը, խորշակը, սելավը, հեղեղումները և այլն:


ՀՀ կառավարության 20 հուլիսի 2023 թվականի N 1222-Լ որոշմամբ հաստատվել ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության կատարմանն ուղղված 2023-2026 թվականների միջոցառումների ծրագիրը»:<sup>3</sup> Ընդունված միջոցառումների ծրագրում որպես կլիմայական ռիսկերի մեղմման գործիք է դիտարկվում փոքր ագրարային տնտեսությունների ապահովագրության համակարգի գործիքակազմի ներդրումը:

2024 թվականի մայիսի 25-26-ին Հանրապետության հյուսիսում տեղացած հորդառատ անձրևներից առաջացրած հեղեղումների հետևանքով ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի Վահագնաձոր և Ձորագետ հայտարարվել են աղետի գոտի<sup>4</sup>: Բնական աղետին հետևել են սելավային հոսքերի և փլուզումների, հողի բերրի շերտի կորուստ, ինչպես նաև ենթակառուցվածքների և սարքավորումների խափանմամբ պայմանավորված ձեռնարկությունների և ենթակառուցվածքների աշխատանքների դադարեցման դեպքեր: Բնակչության շրջանում և զանգվածային լրատվամիջոցներում արժարժվել են արտահոսքերով ջրային ռեսուրսների աղտոտման, «ՁորաՀԷԿ» ՓՀԷԿ-ի գլխամասի ջրընդունիչից բացթողումների վերաբերյալ լուրերը, որը գեներացրել է լրացուցիչ լարվածություն: Լայնամասշտաբ աղետի հետևանքով բնակչությանը, մասնավոր

<sup>3</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=180654>

<sup>4</sup> <https://www.irtek.am/views/act.aspx?aid=125775>

ձեռնարկություններին ու պետությանը պատճառվել են ահռելի վնասներ:



**Նկար 5: 2024թ. մայիսի 24-26-ին հորդառատ տեղումներից հետո վնասված Մ6 միջպետական ճանապարհը Չորագետ բնակավայրի տարածքում և Դերեղ գետը աղետից հետո**

Հունիսին Լոռիում շարունակվեցին հորդառատ անձրևները, որոնք մեծացրին աղետի աշխարհագրությունը, Փամբակ համայնքում տուժեցին հատկապես Դերետ, Եղեգնուտ, Վահագնի լեռնային բնակավայրերը:



**Նկար 6: Հունիսյան հեղեղից տուժած Դերետ բնակավայրի փողոցներից մեկը**

Շինությունների կորստի, հողամասերի և այգիների վերականգնման, անկված ընտանի կենդանատեսակների և թռչունների դիմաց փոխհատուցումների չափի հաշվարկին ՀՀ կառավարությունն անդրադարձել է 2024թ. օգոստոսի 15-ին «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում առաջացած արտակարգ իրավիճակի

հետևանքով հայտարարված աղետի գոտիների տարածքներում գյուղատնտեսության ոլորտում բնակչությանը պատճառված վնասի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» 1264-Լ որոշմամբ<sup>5</sup>:

«Հարմարվողականության ազգային ծրագիր Հայաստանում» ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագրի շրջանակում մշակվել է Կլիմայական և կապակցված բնական վտանգների և ռիսկերի աշխարհագրական տեղեկատվական համակարգերի քարտեզների աստլաս Շիրակի և Լոռու մարզերի համար<sup>6</sup>: Ատլասի հիմնական նպատակն է քարտեզագրական նյութերի միջոցով աջակցել կլիմայական փոփոխությունների հետ կապված խնդիրների լուծմանը: Այն մշակվել է «Գեոռիսկ» գիտահետազոտական ՓԲԸ փորձագետների կողմից:

Համաձայն ՀՀ կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 1.10 կետի՝ մինչև 2025թ-ի 4-րդ եռամսյակ պետք է մշակվի Լոռու մարզի կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը և ներկայացվի ՀՀ վարչապետի աշխատակազմ:

### Գործողություն

Առաջարկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ին իրականացնել վերջին տարիներին Հայաստանի բոլոր համայնքների, այդ թվում Փամբակի կլիմայական պայմանների փոփոխության վերլուծություն և այն ներառել տարեկան տեղեկագրերում: Դա հիմք կհանդիսանա համայնքների կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումների մշակման համար:

## 2. ԿԱՅՈՒՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՎ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՓԱՐԻԶՑԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԳՐՈՎ ՀՀ ՍՏԱՆԶՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՑԱԼՆԵՐԸ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

«ԷկոԼուր»-ի անցկացրած հարցումների արդյունքների համաձայն՝ համայնքում էներգախնայողության և Փարիզյան համաձայնագրի շրջանակներում կլիմայի փոփոխության դիմակայությանը ջերմոցային գազերի նվազեցմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ բնակչության իրազեկվածության մակարդակը ցածր է. հարցվածների 75%-ն այդ մասին տեղյակ չէ, մնացածի շրջանում տեղեկատվությունն ամբողջական չէ:

Քաղաքապետերի դաշնագրին միանալը հնարավորություն կտա գնահատել Փամբակի պատրաստվածությունը՝ իրականացնելու սոցիալ-էկոլոգիական, էներգետիկ, կլիմայական միջոցառումներ և ծրագրեր, որոնք ուղղված կլինեն ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը՝ հաշվի առնելով համայնքի առանձնահատկությունները, հնարավորությունները և բարելավելով տնտեսական, սոցիալական և բնապահպանական իրավիճակը: Այն կապահովի համայնքի կայուն, կանաչ զարգացումը և կնպաստի

<sup>5</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=196411>

<sup>6</sup> <https://drive.google.com/file/d/1mvxicP83hdYIZW5jkWxfHaf3KeCodD/view>

Փարիզյան համաձայնագրի շրջանակներում ՀՀ ստանձնած ԱՄԳ<sup>7</sup> պարտավորությունների կատարմանը:

### **3. ԷՆԵՐԳԻԱՑԻ ՏԵՂԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՆՐԱՑԻՆ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՕԲՅԵԿՏՆԵՐ**

Փամբակ համայնքը գազաֆիկացված է: Բնակչությունն օգտագործում է գազ, էլեկտրաէներգիա, վառելափայտ, աթար:


Փամբակում իրականացվում են էներգախնայողության և էներգաարդյունավետության ծրագրեր: 2023թ. տվյալներով՝ համայնքի 11 բնակավայրում տեղադրված է 54 արևային պանելային համակարգ, 9 բնակավայրում՝ 105 արևային ջրատաքացուցիչ: Բնակավայրերում տեղադրվել է 417 ԼԷԴ լամպ, որից 80-ը փոխարինել են հին լամպերին, մնացածը նոր լուսավորության համակարգերի անցկացման արդյունքում են տեղադրվել:

ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 31-ի N 1853-Ն որոշմամբ Փամբակ համայնքին հատկացվել է 6 միլիոն 980 հազար դրամ՝ «Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի լուսավորության համակարգերի կառուցում և նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ» ծրագրի համար: Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերում նախատեսվում է ստեղծել գիշերային լուսավորության համակարգ, Ձորագետում ամրացնել համայնքային նշանակության շինությունը և կապիտալ նորոգել շենքի տանիքը:

«ԷկոԼուր»-ի հարցումների վերլուծության համաձայն՝ Փամբակի տնային տնտեսություններում օգտագործվող էներգակիրների դիմաց կատարվող տարեկան ծախսերը կազմում են՝ վառելափայտ ամռանը՝ 10 000 դրամ, ձմռանը՝ 100 000-130 000 դրամ, բնական գազ՝ ամռանը՝ 3 000 դրամ, ձմռանը՝ 35 000 դրամ, էլեկտրաէներգիա՝ ամռանը 4 000 դրամ, ձմռանը՝ 7000-9 000 դրամ: Բնակչության մի մասն օգտագործում է նաև կենսազանգվածի բրիկետներ և աթար: Ծախսերի կրճատման, անտառի վրա ճնշման մեղմման համար հարցվածների կարծիքները բաշխվել են հետևյալ կերպ.

<sup>7</sup> <https://www.e-gov.am/gov-decrees/item/36064/>

Էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների կրճատման և անտառի վրա ճնշման նվազեցմանն ուղղված գործողություններ



Նկար 7. Էլեկտրաէներգիայի դիմաց վճարումների կրճատման և անտառի վրա ճնշման նվազեցմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հարցվածների կարծիքների բաշխում

**Գործողություն**

Համայնքում ցածր մակարդակի վրա է նոր տեխնիկական միջոցների խնամքի և վերականգնման ծառայությունների մատուցումը: Անհրաժեշտ է ֆինանսական ռեսուրսներ նախատեսել այդ համակարգերի տեղադրումից հետո դրանց պահպանման և վերանորոգման ծախսերի համար:

Էներգետիկ աղքատության նվազեցման նպատակով կազմել համայնքային նշանակության սեփական արևային կայանի կառուցման ծրագիր և ապահովել դրա իրականացումը, խթանել համայնքային շենք-շինությունների տանիքներին ինքնավար արևային կայանների տեղադրումը և ջրատաքացուցիչների ներդրումը:

Ստեղծել նախադրյալներ ՀՀ կառավարության «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագրի 54-րդ կետով նախատեսվող արևային, հողմային, ինչպես նաև կենսազանգվածային էներգիայի կայանների ծրագրերի իրականացման համար համագործակցելու մասնավոր հատվածի հետ՝ վառելիքային պահանջարկը նվազեցնելու և այն վերականգնվող էներգիայի աղբյուրներով փոխարինելու նպատակով:

**Հիդրոէներգետիկա**

Փամբակ համայնքի տարածքով հոսող գետերի և դրանց վտակների վրա կառուցված է 6 փոքր ՀԵԿ՝ 31 049 Կվտ ընդհանուր հզորությամբ և էլեկտրաէներգիայի փաստացի միջին տարեկան 94,6 մլն.կվտ/ժ օգտակար առաքմամբ: Փոքր ՀԵԿ-երի հիմնական բնութագրերը ներկայացված են Հավելված 1-ում:

ՓՀԵԿ-եր շահագործող ընկերությունները չեն մասնակցում համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված, ինչպես նաև կլիմայի հարմարվողականության ծրագրերի իրականացմանը:

2022թ. Փամբակի ավագանին հոկտեմբերի 14-ի N 125-Ա որոշմամբ «Էվելպիս» ՍՊԸ-ի «Վահագնաձոր» փոքր ՀԵԿ-ի դերեվացիոն խողովակաշարի անցկացման և ջրընդունիչի կառուցման նպատակով տրամադրել է պետական սեփականություն համարվող 0,052762 հա ջրային ֆոնդի հողամաս տարեկան 40000 դրամ վարձավճարով և տրամադրել է 0,001000 հա ջրային ֆոնդի հողամաս փոքր ՀԵԿ-ի դերեվացիոն խողովակաշարի անցկացման և ջրընդունիչի կառուցման նպատակով տարեկան 10000 դրամ վարձավճարով:

2022 թ. հունիսի 4-ի N 96-Ա որոշմամբ նույն ընկերությանը նույն նպատակով տրամադրել է 0,300874 հա ջրային ֆոնդի հողամաս 200000 դրամ տարեկան վարձավճարով:

2022 թ. հունիսի 6-ի N 74-Ա որոշմամբ «Էվելպիս» ՍՊԸ-ի «Վահագնաձոր» փոքր ՀԵԿ-ի դերեվացիոն խողովակաշարի անցկացման և ջրընդունիչի կառուցման նպատակով տրամադրել է 0,300874 հա ջրային ֆոնդի հողամաս տարեկան 200 000 դրամ վարձավճարով:

Ավագանու 2022 թ. հունիսի 6-ի N 73-Ա որոշմամբ տարեկան 250 000 դրամ վարձավճարով 2,220471 հա ջրային ֆոնդի հող և տարեկան 50 000 դրամ վարձավճարով 0,196986 հա գյուղատնտեսական նշանակության հող տրամադրվել է «Բեսթ Հիդրո Սիսթեմ» ՍՊԸ-ի «Փամբակ 1» փոքր ՀԵԿ-ի դերեվացիոն խողովակաշարի անցկացման համար:

#### Գործողություններ

1. Առաջարկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը Փամբակ և Դեբեդ գետի Ձորագետ վտակի վրա ՓՀԵԿ-երի ազդեցության գոտիներում տեղադրել մակերևութային ջրերի հիդրոլոգիական դիտակետեր:

#### Իրավակարգավորում

2019թ. հունիսի 28-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի 30.1 հոդվածի համաձայն<sup>8</sup>՝ նոր կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների ջրօգտագործման թույլտվությունների հայտերը մերժվում են, եթե՝

- 1) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումը նախատեսվում է այն գետերի վրա՝
  - ա. որոնցում առկա են Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կամ տարածքին բնորոշ՝ էնդեմիկ ձկնատեսակների ձվադրավայրեր,
  - բ. որոնց ծանրաբեռնվածությունը դերիվացիոն խողովակներով 40 տոկոս և ավելի է,
  - գ. որոնց վրա կան ջրաչափական դիտակետեր և նախատեսվող ջրառի և ջրահեռացման նիշերը շրջանցում են ջրաչափական դիտակետերը.

<sup>8</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docid=132103>

- 2) փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցումն իրականացվում է՝  
 ա. Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտիներում,  
 բ. բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանման գոտիներում,  
 գ. բնության հուշարձանների 150 մետր շառավղով հարակից տարածքներում,  
 դ. ջրակոհամակարգերի պահպանման գոտիներում,  
 ե. գետերի հոսքի ձևավորման տարածքներում,  
 զ. գետահատվածներում, որտեղ առկա են սողանքային տարածքներ,

է. անտառային հողերում կամ տարածքներում, որտեղ շինարարական տարածքին մոտեցող ճանապարհներ կառուցելու նպատակով առաջանում է ծառեր հատելու անհրաժեշտություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքի 20-րդ հոդվածով նախատեսված պետական անտառային հողերում աշխատանքների իրականացման համաձայնության առկայության դեպքերի:

Սույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով նախատեսված գետերի ցանկը սահմանում է Կառավարությունը:

Սույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «ե» ենթակետով նախատեսված սողանքային տարածքները սահմանում է Կառավարությունը:»:

ՀՀ կառավարության 2021թ. ապրիլի 8-ի 488-Ն որոշմամբ<sup>9</sup> մերժվում է ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը 25 գետերի վրա փոքր ՀԷԿ-եր կառուցելու համար: Այդ գետերի ցանկում են Դեբեդ, Ձորագետ, Աղստև գետերը:

2022թ. հուլիսի 7-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որի համաձայն՝ բնօգտագործման վճար կգանձվի հիդրոէլեկտրակայաններից 1 խմ-ի համար 0,1 դրամի չափով: Օրենքն ուժի մեջ կմտնի 2024թ-ի հունվարի 1-ից<sup>10</sup>:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության վերլուծության ու հաշվարկների համաձայն՝ 2017-2019թթ.-ին հիդրոէլեկտրակայանների կողմից օգտագործված ջրի ծավալը միջինում կազմել է 6,2 միլիարդ խմ: Հետևաբար, սահմանված դրույքաչափով բնօգտագործման վճարներից պետությունից մուտքերը տարեկան կավելանան մոտավոր 620 միլիոն դրամով:

**Գործողություն**

**Փոքր հիդրոէլեկտրակայանների վճարած բնօգտագործման վճարներն ուղղել ազդակիր համայնքներում կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման, էներգախնայողության և էներգաարդյունավետության, ջրային ռեսուրսների պահպանման և կայուն օգտագործման ծրագրերի իրականացմանը:**

<sup>9</sup> <https://www.arlis.am/documentview.aspx?docID=151502>  
<sup>10</sup> <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=166211>

#### 4. ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Փամբակ համայնքը գտնվում է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղի (նախկին Գուգարքի և Եղեգնուտի մասնաճյուղերի) տարածքում: Այս մասնաճյուղերը զբաղեցնում են 3951,6214 և 1408,2 հա մակերես, որոնցից անտառապատ տարածքները կազմում են 3179,2 և 11826,8 հա<sup>11</sup>:

##### 4.1 Անտառային տնտեսության խնդիրները

Փամբակ համայնքի բնակչության գերակշիռ մասը կենցաղում օգտագործում է վառելիքայտ: Բնակիչները հանդիպումների ժամանակ նշեցին, որ անտառում թափուկ չլինելու պատճառով իրենց տրամադրվում է 3 խմ թափուկ, ինչը խիստ անբավարար է իրենց կարիքները հոգալու համար:



**Նկար 8. Գուգարքի անտառները**

ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի համաձայն՝ 2022թ. «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի մասնաճյուղում հայտնաբերվել է ապօրինի հատումների 17, սաղարթի փոփոխության 267 օջախ, իսկ ընդհանուր Լոռու մարզում անտառի սաղարթի փոփոխության օջախների մակերեսը կազմել է 50 000 հա:

2023թ. 3-րդ եռամսյակում Եղեգնուտի, Վահագնիի անտառապետություններում հայտնաբերել են հատված ծառերի կոճղեր՝ բոխի և հաճարենի տեսակների առանց համապատասխան կնիքների: Վահագնիի անտառապետության 13-րդ քառակուսու 4-րդ, 14-րդ հատվածների ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տվյալ տեղամասերում 2022թ. ընթացքում տեղի է ունեցել հրդեհ, այրվել է մոտ 142հա անտառածածկ տարածք: Ամբողջությամբ վնասվել է 16 հա անտառածածկ տարածք:

2020-2022թթ. ընթացքում պետական բյուջեով և այլ ֆինանսական աղբյուրների միջոցով իրականացված անտառապատման և բնական վերաճի օժանդակման միջոցառումների

<sup>11</sup>

<http://forestcommittee.am/%d5%af%d5%b8%d5%b4%d5%ab%d5%bf%d5%a5/%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%bc-%d5%ba%d5%b8%d5%a1%d5%af%d5%b0%d5%a1%d5%b5%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%bc-%d5%ba%d5%b8%d5%a1%d5%af%d5%a1%d5%b6%d5%bf%d5%a1%d5%bc%d5%a1%d5%b5%d5%ab%d5%b6-%d5%b0%d5%b8%d5%b2%d5%a5%d6%80/>



ուսումնասիրության արդյունքում ՊՈԱԿ-ը պարզել է, որ «Հայանտառ»-ի 13 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ այդ թվում Վանաձորի մասնաճյուղում, առկա են հետևյալ խնդիրները.

- Անտառապատման համար նախատեսված մակերեսների անհամապատասխանությունը իրական չափերին

- Ծառատեսակների ոչ համապատասխան ընտրությունը բնակլիմայական պայմաններին

- Ծառատեսակների ցածր կաչոնականությունը (միջինը 40%)

- Խնամքի աշխատանքների թերի լինելը

- Ոռոգման համակարգերի բացակայությունը

- Ցանկապատների թերի լինելը:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի 16 անտառտնտեսություն մասնաճյուղերում՝ այդ թվում Վանաձորի մասնաճյուղում, 2022թ. համար հատկացված և շահագործված՝ խնամքի, սանիտարական և այլ նպատակով հատատեղերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են մի շարք անհամապատասխանություններ և թերություններ:

- Սանիտարական հատման նպատակով ուսումնասիրված հատատեղերում հատման համար նախատեսված ծառերի մի մասն իրենց կենսաբանական ու տնտեսական հատկանիշներով չեն համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:

- Հատկացված հատատեղերի մի մասը գտնվում էր 30°-ից բարձր թեքությունների վրա, ինչը հետագայում կարող է հանգեցնել էռոզիոն պրոցեսների:

- Ուսումնասիրված հատատեղերի մի մասում առկա են համարակալումներ, որոնք արված են բնի վրա արմատավզիկից վերև, ինչպես նաև մեծ մասաբ անընթեռնելի են, ինչը չի համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:

- Խնամքի հատման նպատակով ուսումնասիրված հատատեղերում հատման համար նախատեսված ծառերի մի մասը իրենց կենսաբանական ու տնտեսական հատկանիշներով, հասակային դասի սխալ ընտրության, ինչպես նաև ցածր լրիվությամբ պայմանավորված չեն համապատասխանում «Խնամքի և սանիտարական հատումների մասին» կարգի դրույթներին:

- Հատատեղի տոմսերում առկա քառակուսիները և հատամասերը շեղվում են փաստացի դաշտային տվյալներից:

- Որոշ հատատեղերում առկա էին կրկնվող համարներով հատված կոճղեր:

<p><b>Գործողություններ</b></p> <p>Համայնքի վարչակազմի կողմից բնակչության շրջանում կազմակերպել անտառի կլիմակարգավորիչ դերի վերաբերյալ իրազեկման դասընթացներ՝ որպես հարթակ</p>
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

օգտագործել միջազգային կառույցների և դոնոր համայնքի հետ իրականացվող ծրագրերի քննարկումները:

Ուժեղացնել հանրային հսկողությունը և պետական վերահսկողությունն ապօրինի անտառօգտագործման նկատմամբ: Կանխել անտառային հրդեհները:

Համայնքում էներգետիկ աղքատության, վատելափայտի պահանջարկի կրճատման համար իրականացնել այլընտրանքային էներգետիկ և սոցիալական ծրագրեր համայնքի մասնակցությամբ:

Մշակել մեխանիզմ՝ մոտիվացնելու ձեռներեցներին խուսափել ապօրինի անտառահատումներից բիզնես շահի համար: Այս հարցում ուժեղացնել համայնք - «Հայաստան» ՊՈԱԿ-ի Վանաձորի անտառտնտեսություն համագործակցությունը:

#### 4.2 Անտառային տարածքներում տարվող անտառվերականգնման աշխատանքների մասին

Վանաձորի անտառտնտեսությունում 2023թ. անտառհիմնման մեծածավալ աշխատանքներ են կատարվում: ՀՀ պետբյուջեից հատկացված 150 միլիոն դրամով նախատեսված է 470 հա անտառ հիմնել՝ 200 հա բնաշիվային, 270 հա՝ անտառի ցանք և տնկում<sup>12</sup>:

Հայաստանում Ճապոնիայի դեսպանության տրամադրած Մարդկային Անվտանգության «Grassroots» դրամաշնորհային ծրագրի (GGP) շրջանակում 2023թ. «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական ՀԿ-ն նախատեսում է Գուգարքի Բենջամին Գումուշձեան տնկարանի կառուցում, 506 քմ տարածքով անտառային տնկիների ջերմոցի ստեղծում, որը հնարավորություն կտա տարեկան աճեցնել լրացուցիչ 115.200 անտառային ծառատեսակների տնկիներ<sup>13</sup>:

Դեբետ բնակավայրի տարածքում գտնվող «Իմ անտառ Հայաստան» ՀԿ-ի տնկարանում, նախատեսվում է աճեցնել 17 ծառատեսակի և 10 տեսակ թփի տնկիներ:

«Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը 2005 թ-ին Մարգահովիտ գյուղում հիմնադրել է անտառվերականգնման տնկարան: Հիմնադրամը 2019թ. Մարգահովիտում բացել է նոր փորձարարական ջերմոց: Նորակառույց ջերմոցը համալրվել է ծառերի աճեցման համար նախատեսված թաղարներով:

Մարգահովիտ գյուղում ավապաշտպան անտառաշերտ ունենալու նպատակով<sup>14</sup> 2020թ. «Հայաստան» ՊՈԱԿ-ի կողմից տնկվել է 120 հազար ուռենի:

Մարգահովիտ բնակավայրում ճապոնական «Յակոնիա» հիմնադրամին անհատույց տրամադրվել է 10 հա հող, որի վրա աճեցնում են միսկանտուս գիգանտուս բույսը: Այն 3

<sup>12</sup> <https://armenpress.am/arm/news/489932/>

<sup>13</sup> <https://myforestarmenia.org/hy/new-greenhouse-in-gugark/>

<sup>14</sup> <https://www.armeniatree.org/hy/forestation>

տարի աճեցնելուց հետո 25 տարի անընդմեջ օգտագործվելու է որպես բրիկետի պատրաստման հումք:



**Նկար 9. Միսկանտուս գիգանտուս բույսի աճելավայր Մարգահովիտում**

Գյուղում արդեն իսկ կառուցվել է բրիկետի պատրաստման գործարան:

2021-2029թթ. ՀՀ Լոռու և Սյունիքի մարզերում, որտեղ տեղակայված է Հայաստանի անտառային ֆոնդի 49%-ը, կիրականացվի «Հայաստանում անտառների դիմակայության բարձրացում՝ մեղմացման միջոցառումների շնորհիվ հարմարեցման և գյուղական վայրերում կանաչ տարածությունների ընդլայնման միջոցով» ծրագիրը: Ծրագրով նախատեսվում է 2,5%-ով ընդլայնել անտառածածկը, վառարանների արդյունավետության բարձրացման միջոցով նվազեցնել վառելավայրի պահանջը 30%-ով, ուժեղացնել կայուն և կլիմայի տեսանկյունից հարմարվողական անտառկառավարման գործիքակազմը: Ակնկալվում է, որ անտառ-էներգիա փոխկապակցված մոտեցման շնորհիվ 20 տարվա ընթացքում շուրջ 20 միլիոն տոննա ածխածնի երկօքսիդ մթնոլորտ չի արտանետվի:

Ծրագիրն իրականացվում է Կանաչ կլիմայի հիմնադրամի, Ավստրիայի զարգացման գործակալության, Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի, Իտալիայի Տորցիանո ինքնավար նահանգի աջակցությամբ: Իրականացնող մարմիններն են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տեղական գրասենյակն ու Շրջակա միջավայրի նախարարության ծրագրերի իրականացման գրասենյակը: Ծրագրի ընդհանուր բյուջեն 18.7 միլիոն ԱՄՆ դոլար է:

## **5. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

Փամբակ համայնքի վարչական տարածքը հարուստ է օգտակար հանածոներով: Այստեղ գործունեություն են իրականացնում մետաղական և ոչ մետաղական հանքավայրեր շահագործող մի շարք կազմակերպություններ, ինչպես նաև շահագործման նպատակով նոր հանքավայրերի երկրաբանական հետազոտություններ են ընթանում են ընդերքի տեղամասերում:

Համայնքի տարածքում տորֆի պաշարների ուսումնասիրությունն է կատարում «Համգաչիման էկո» ՄՊԸ-ն, որի համար Փամբակի ավագանին 2022 թ. հունիսի 14-ի N 83-Ս որոշմամբ<sup>15</sup> տրամադրել է 1.986548 հա հողամաս:

Քարաբերդ բնակավայրի տարածքում գտնվող ոսկու հանքավայրի կենտրոնական տեղամասի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «ԱՄՄԱԹ» ՄՊԸ-ին: Տրամադրված օգտակար հանածոյի մարվող պաշարների քանակը 272555.9 տ է, որից ոսկի՝ 1443,48 կգ, արծաթ՝ 2583,5 կգ: Հանքավայրի զբաղեցրած տարածքը 2,6 հա է:



***Նկար 10. Քարաբերդի ոսկու հանքավայր Փամբակ համայնքի Քարաբերդ բնակավայրի տարածքում***

Ընկերությունն իր ընդերքօգտագործման պայմանագրով ազդակիր Քարաբերդ բնակավայրի նկատմամբ ստանձնել է որոշակի սոցիալական պարտավորություններ՝ ամեն տարի հատկացնել 1 միլիոն 400 հազար դրամ անապահով ընտանիքների օգնություն, 2 միլիոն 200 հազար դրամ՝ համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրին մասնակցության համար, 3 միլիոն 200 հազար դրամ՝ գյուղական միջհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման համար, 4 միլիոն 200 հազար դրամ՝ դպրոցի և մանկապարտեզի կարիքների համար /Նշենք, որ բնակավայրը չունի մանկապարտեզ և դպրոց/ ֆինանսական օգնություն: Համայնքի նկատմամբ ստանձնած պարտավորություններից ոչինչ չի կատարվել մինչև 2019թ., իսկ 2019թ. Ընկերությունը վճարել է 660.0 հազ. դրամ: Մնացորդը, համաձայն Ընկերության և Քարաբերդի համայնքապետարանի հետ կնքված ժամանակացույցի, կվճարվի հետագայում: Ընկերության ԱՃԹՆ 2020 թ. հաշվետվությունից<sup>16</sup> պարզվում է, որ այդ թվին նույնպես համայնքին սոցիալական օժանդակություն չի ցուցաբերել, բայց վճարել է 170 000 դրամ հողի հարկ, իսկ 2021 թ. հողի հարկ չի վճարել, սակայն 1 միլիոն 739 հազար 973 դրամային արժեքով կատարել է Քարաբերդի գերեզմանատան ցանկապատում<sup>17</sup>:

2. Արջուտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող Արջուտի ոսկու հանքավայրի ընդերքօգտագործման իրավունքը պատկանում է «Բակտեկ էկո» ՄՊԸ-ին: Ըստ Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրի՝ հաստատված պաշարները կազմում են՝

<sup>15</sup> <https://pambak.am/Pages/DocFlow/Default.aspx?a=v&g=4bcb2400-9750-441c-971c-b62bb75d4d07>

<sup>16</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/company-df/?year=2020&company=19>

<sup>17</sup> <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2021&company=19>

հանքաքար՝ 2423,9 հազար տոննա, ոսկի՝ 3467,4 կգ, արծաթ՝ 20,39 տոննա, պղինձ՝ 6821,0 տոննա: Հանքավայրի զբաղեցրած տարածքը 16,7 հա է:

Ըստ պայմանագրի՝ Ընկերությունը համայնքի սոցիալական զարգացման համար պարտավորվել է տարեկան կատարել 650,0 հազար դրամի օժանդակություն, ինչը սակայն չի կատարվել մինչև 2019թ-ը: Ընկերության 2020թ. ԱՃԹՆ հաշվետվության համաձայն՝ այդ թվականին նույնպես չի կատարել իր սոցիալական պարտավորությունները, չի վճարել հողի հարկը, սակայն բնակավայրի բնակիչներին տրամադրել է 168333 դրամի սնունդ<sup>18</sup>, իսկ 2021թ. հաշվետվություն չի ներկայացրել:

3. Քարաբերդի քվարցային գաբրոդիորիտների (գրանոդիորիտների) հանքավայրի 1,8 հա տարածքը շահագործում են «Ա.Ա.Բ. պրոեկտ» ՍՊԸ-ն:

4. Եղեգնուտի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 2,35 հա տարածքը շահագործել է «Ավազահանք» ՍՊԸ-ն:

**Խնդիր**

1. Համայնքը չի մասնակցել ընդերքօգտագործման պայմանագրի կնքման գործընթացին և տեղեկացված չի եղել, թե ինչ սոցիալ-տնտեսական պարտավորություն է ստանձնել Ընկերությունը, հնարավորություն չի ունեցել ներկայացնելու իր կարիքները:

2. Համայնքի երկու մետաղական հանքերը երկար տարիներ կամ չեն շահագործվել, կամ շահագործվում են ընդմիջումներով, ինչի հետևանքով չեն վճարում ռոյալթի, չեն կատարում համայնքի սոցիալ-տնտեսական աջակցության ցուցաբերման իրենց պարտավորությունները:

3. Համայնքի վարչական տարածքի ոչ մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունների ընդերքօգտագործման պայմանագրերով համայնքին սոցիալական օժանդակության ցուցաբերելու պարտավորություններ չեն ներառվել:

**Գործողություն**

«Ընդերքօգտագործման պայմանագրերի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի մարտի 22-ի N 437-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն, ազդակիր համայնքին դարձնել ընդերքօգտագործման պայմանագրի կողմ:

Սահմանել դրույթներ ընդերքօգտագործման պայմանագրերում ընդերքօգտագործողի կողմից սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում նվազագույն ներդրումային չափի մասին:

Համայնքի հանքավայրերի տարածքներում տեղադրել մթնոլորտային օդի արտանետումների մշտադիտարկման դիտակետեր:

**Իրավակարգավորում**

<sup>18</sup> <https://reports.citi.am/hy/report/search/company-pdf/?year=2021&company=19>  
20

2022թ. մարտի 4-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մշակած «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերը: Ըստ այդմ, ազդակիր բնակավայրերն ընդերքօգտագործողների վճարած ռոյալթիի 2%-ի չափով մասհանումները կստանան 2024թ. հունվարի 1-ից:

ՀՀ կառավարությունը 2022թ. սեպտեմբերի 1-ի Ն 1370 որոշմամբ<sup>19</sup> սահմանել է համայնքային մասհանումների ծախսման ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությունները, որոնք են.

- 1) գյուղատնտեսություն
- 2) կրթություն և գիտություն
- 3) առողջապահություն
- 4) սոցիալական ապահովություն
- 5) մշակույթ, սպորտ և երիտասարդության զբաղվածություն
- 6) քաղաքաշինություն
- 7) ջրամատակարարում և ջրահեռացում
- 8) տրանսպորտ և ճանապարհաշինություն
- 9) զբոսաշրջություն:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022թ. սեպտեմբերի 26-ի N16-Ն հրամանի համաձայն՝ հրապարակվել է մասհանումներ ստացող համայնքների ցանկը<sup>20</sup>: Դրանք ազդակիր 6 համայնքի 33 բնակավայրեր են: Փամբակ համայնքն այդ ցանկում չի ներառված, քանի որ համայնքի տարածքում գործունեության լիցենզիա ունեցող «Ասսաթ» և «Բակտեկ Էկո» ՍՊԸ -ները 2021 թվականի ընթացքում փաստացի չեն վճարել ռոյալթի:

Հայաստանի ԱՃԹՆ-ի զեկույցներով հրապարակված տվյալներով՝ 2016-2019թթ. ՀՀ պետական բյուջե է վճարվել (հաշվարկվել) համապատասխանաբար 23.5 միլիարդ, 37.6 միլիարդ, 34.6 միլիարդ և 37.4 միլիարդ ՀՀ դրամի ռոյալթի: Հետևաբար, ազդակիր համայնքերի միջև կբաշխվի մոտավորապես 700-800 միլիոն ՀՀ դրամի չափով գումար, իսկ մետաղների գների աճի պահպանման պայմաններում, հաշվարկվող ռոյալթին, հետևապես նաև մասհանվող գումարները նույնպես կաճեն<sup>21</sup>:

## 6. ԿՈՍՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԹԱՓՈՆՆԵՐ

Փամբակ համայնքի Արջուտ գյուղում է տեղակայված Վանաձոր քաղաքի 6,5 հա տարածք զբաղեցնող աղբավայրը: Ներկայում աղբավայրի տարածքը մասնավոր սեփականություն է: Այն սահմանված նորմերին համապատասխան չի շահագործվում և կառավարվում. պարսպապատ չէ, չունի պահակակետ: Այն շարունակաբար ծխում է ինչպես ինքնարյման, այնպես էլ հրդեհման արդյունքում՝ մթնոլորտ արտանետելով այրման արգասիքները՝

<sup>19</sup> <https://www.e-gov.am/gov-decrees/item/38938/>

<sup>20</sup> <https://www.mtad.am/pages/deductions?file=panel5601>

<sup>21</sup>

<https://www.eiti.am/hy/%D5%86%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80/2021/08/12/2/112/>

ածխաթթու և շնոլ գազեր, ազոտի օքսիդներ, դիօքսիդներ: Աղբավայրում երբեմն կատարվում են հողածածկման աշխատանքներ հարկ եղած ժամանակ վարձու տեխնիկայի կիրառմամբ: Արջուտ գյուղի մոտ 20 հա վարելահողեր չեն մշակվում՝ աղբավայրից աղտոտումների պատճառով: «Վանաձոր-Սանմաքրում» ՓԲԸ-ն օրական միջինը 30 ավտոմեքենա աղբ է տեղադրում այդտեղ: Փամբակ համայնքի բնակավայրերից միայն Մարգահովիտն է աղբը տեղափոխում Հաղարծինի աղբավայր:



**Նկար 11. Արջուտի ծխացող աղբավայրը**

Ըստ սահմանված չափաքանակների՝ համայնքի բնակչության կողմից տարեկան առաջանում է մոտավոր 1900 տոննա կոշտ կենցաղային թափոն (13215 մարդ x 0.4 կգ օրական x 365 օր):

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի՝ աղբավայրի հարակից տարածքներում հայտնաբերվել են ԴԴՏ-ի իզոմերների կոնցենտրացիաներ: ՀՔՑՀ-ներ հայտնաբերվել են հողի բոլոր (100%) նմուշներում, իսկ ՀՔԷ-Ա-ի դեպքում այդ ցուցանիշը եղել է մոտ է 85%: Ոչ դիօքսիանանման ՊՔԲ-ների գումարային կոնցենտրացիաները հողի նմուշներում շատ դեպքերում գերազանցում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիան 1.04-50 անգամ: Ոչ դիօքսիանանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները հողի նմուշներում գերազանցում են դիօքսիանանման ՊՔԲ-ների կոնցենտրացիաները 8.5-71.7 անգամ:

Ոչ լիարժեք և ոչ կանոնակարգված աղբահանության հետևանքով բնակավայրերին կից տարածքներում, ձորակներում ձևավորվել են ինքնակամ աղբակույտեր, որոնք հողի և ջրի աղտոտման անկառավարելի աղբյուրներ են: Դրանց համար որևէ մարմին պատասխանատվություն չի կրում, և դրանք չեն հաշվառվում ջերմոցային գազերի արտանետման տեսանկյունից:

Փամբակ համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասով կոմունալ ծառայության ծախսերը կազմել են 300,0 հազար դրամ: Համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագրով նախատեսված է 222 300,0 հազար դրամ արժեքով «Փամբակ համայնքի կոմունալ ծառայության հիմնում և զարգացում» ծրագիրը, ինչի իրագործման արդյունքում

աղբահանության խնդիրը մասնակիորեն կլուծվի: Ծրագրով նախատեսվում է ձեռք բերել 1 տրակտոր, 2 աղբատար, 1 բեռնատար մեքենա և 50 աղբաման:

ՀՀ կառավարության 2017 թվականի նոյեմբերի 23-ի N 49 արձանագրային որոշման 11-րդ կետով հավանության է արժանացել Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգը, համաձայն որի նախատեսվում է ամբողջ մարզի և Տավուշի մարզի Դիլիջան համայնքի համար ստեղծել եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայր, որը կկառավարվի նախատեսվող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով թափոնների գործածության ոլորտում ՏԻՄ-երի իրավասություններն են.

- ա) հսկողություն աղբահանման նկատմամբ
- բ) տարածքների սանիտարական մաքրման սխեմաների կազմում
- գ) չհսկվող և չարտոնագրված աղբավայրերի վերացում
- դ) ռեսուրսային արժեք ունեցող ոչ վտանգավոր թափոնների հավաքման գործընթացին բնակչության մասնակցության կազմակերպում
- ե) համայնքում սպառման թափոնների տեսակավորված հավաքման համակարգի ներդրմանն աջակցություն:

#### Խնդիր

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքով ՏԻՄ-ը աղբավայր շահագործելու լիազորություն չունի: Նույն օրենքով ՏԻՄ-ի համար սահմանված լիազորությունները բավարար չեն թափոնների կառավարումը լիարժեք կազմակերպելու և վերահսկելու համար:

#### Գործողություններ

«Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարել՝ ընդլայնելով և ամբողջացնելով ՏԻՄ-ի լիազորություններն աղբահանության կազմակերպման և աղբավայրերի կառավարման գործում:


«Թափոնների մասին» ՀՀ օրենքում կատարել լրացում՝ հստակեցնելով ՏԻՄ-երի կողմից աղբավայրերի կառավարման գործընթացում մասնակցությունը և պատասխանատվությունը:

«Փամբակ համայնքի կոմունալ ծառայության հիմնում և զարգացում» ծրագիրը համապատասխանեցնել Լոռու մարզի կոշտ կենցաղային թափոնների կառավարման հայեցակարգին:

## 7. ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Փամբակի համայնքային հողերի մակերեսներն ըստ նպատակային նշանակության բերված են աղյուսակ 1-ում:





**Նկար 12. Փամբակի համայնքային հողերի մակերեսներն՝ ըստ նպատակային նշանակության <sup>22</sup>**

Համայնքային սեփականության գյուղատնտեսական նշանակության հողերից 1324,36 հա-ը տրված է վարձակալության, 47,56 հա հողատարածք 2022թ. դրությամբ պարապուրդ է:

Հանքավայրերի երկարատև շահագործումն առանց հողերի պահպանման միջոցառումների իրականացման նպաստել է հողերի շարունակական աղտոտմանը, դեգրադացմանը, հողերում ածխածնի կուտակման կարողության թուլացման:

Քարաբերդի բնակիչների գյուղատնտեսական հողերում չեխական «Առնիկա» ՀԿ-ն «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» և «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ-ների հետ համատեղ հայտնաբերել են ծանր մետաղների բարձր պարունակություն, որոնք շատ դեպքերում գերազանցել են հողի համար նախատեսված ցուցանիշները:<sup>23</sup>

### 8. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ

#### Փամբակ համայնքի 2023թ. բյուջեի սեփական եկամուտները

2023թ. Փամբակի համայնքային բյուջեի եկամտային մասը կազմել է 615 միլիոն 445 հազար 800 դրամ, որից՝ սեփական եկամուտները՝ 157 միլիոն 446 հազար 500 դրամ: Մուտքերն ըստ եկամտատեսակների<sup>24</sup> բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

#### ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի 2023թ. բյուջեի եկամտային մասն՝ ըստ եկամտատեսակների

Եկամտատեսակ	Տարվա ճշտված պլան (հազար դրամ)
Ընդամենը	615 445,8
Սեփական եկամուտներ	157 446,5

<sup>22</sup><http://lori.mtad.am/files/docs/64316.pdf>

<sup>23</sup><https://www.ecolor.org/hy/news/mining/14558/>

<sup>24</sup><https://pambak.am/Pages/NewBudget/InPlan/List.aspx>

Գույքային հարկեր անշարժ գույքից	35 251,7
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	4 000,0
Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	400,0
Գույքային հարկեր այլ գույքից , այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար	85 940,0
Տեղական տուրքեր	4 762,6
Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ	12 800,0
Տեղական վճարներ	12 538,0
Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	1 584,9
Այլ եկամուտներ	2 300,0
ա) Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ բ) Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ	401 679,0

Փամբակ համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասը կազմել է 705 միլիոն 668 հազար դրամ, որից դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ՝ 170 000,0 հազար դրամ:

Աղյուսակ 2

**Համայնքի 2023թ. բյուջեի ծախսային մասը<sup>25</sup>**

Ծախսային մասի տեսակ	Հազար դրամ
<i>Ընդամենը</i>	705 668,0
<b>Աշխատավարձեր և հավելավճարներ</b>	170 000,0

<sup>25</sup><https://www.mtad.am/pages/budget-expenditures-of-ra-communities>

<b>Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում, այդ թվում՝</b>	70 682,0
Էներգետիկ ծախսեր	16 500,0
Կոմունալ ծախսեր	300,0
Կապ	2000,0
գործուղման ծախսեր	1500,0
պայմանագրային այլ ծառայություններ	20032,0
ընդհանուր բնույթի ծառայություններ	13620,0
նյութեր	
Սուբսիդիաներ	18 600
Դրամաշնորհներ	219369,8
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	4300,0
Այլ ծախսեր	16 000,0
Պահուստային ֆոնդից կատարվող հատկացումներ	120584,77
Մեքենաներ և այլ սարքավորումներ	3989,0
Շենքեր և շինություններ	67 540,4

## 9. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՒԲՎԵՆՏԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՅՏԵՐԸ

2022թ. ընթացքում համայնքը ներկայացրել է 7 սուբվենցիոն ծրագիր: ՀՀ կառավարության 2022թ. դեկտեմբերի 31-ի N 1853-Ն որոշմամբ Փամբակ համայնքին հատկացվել է 6 միլիոն 980 հազար դրամ՝ «Եղեգնուտ և Լեռնաջուր բնակավայրերի լուսավորության համակարգերի կառուցում և նորոգում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրմամբ» ծրագրի իրականացման համար:

Փամբակի ավագանին 2022թ. դեկտեմբերի 27-ի N 160-Ա որոշմամբ հաստատել է Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված /նպատակային հատկացումներ ստանալու նպատակով/ Փամբակ համայնքի կողմից ներկայացվող 5 սուբվենցիոն ծրագրերի հայտեր: Դրանք ներկայացված են Աղյուսակ 3-ում:

Փամբակ համայնքի 2023թ. 5 սուբվենցիոն ծրագրերի հայտեր

	Ծրագրի նկարագրությունը	Ծրագրի ընդհանուր բյուջե, հազար դրամ	Համայնքի մասնեբաժինը, հազար դրամ	ԿՓ ուղղվածությունը
1.	Մարգահովիտ, Լեռնապատ, Անտառամուտ բնակավայրերի փողոցների նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով	102 919 192	41 167 677	Հարմարվողականություն
2.	Լեռնապատ բնակավայրի մանկապարտեզի նոր մասնաշենքի կառուցում	45 680 372	15 000 000	Մեղմում
3.	Վահագնի բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով	125 527 032	69 039 868	Հարմարվողականություն
4.	Արջուտ բնակավայրի փողոցի նորոգում ասֆալտապատման միջոցով			
5.	Բազում բնակավայրի նախկին համայնքապետարանի շենքի հիմնանորոգում որպես մշակույթի կենտրոն,  Փամբակ բնակավայրի հանդիսությունների սրահի կառուցում:	79 109 838	43 510 410	Մեղմում
	Ընդամենը	353 236 434	168 717 955	

**10. ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Համաձայն Փամբակ համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագրի<sup>26</sup> 2022-2026թթ.

<sup>26</sup> [https://pambak.am/upload/DocFlow/Projects/Tu2211151703258191\\_.pdf](https://pambak.am/upload/DocFlow/Projects/Tu2211151703258191_.pdf)

տարիներին անհրաժեշտ ֆինանսական միջոցների առկայության պարագայում նախատեսվում է իրականացնել էներգախնայողությանն ու կլիմայի փոփոխության դիմակայությանն ուղղված հետևյալ ծրագրերը.

	Ծրագրի նկարագրությունը	Բյուջե, հազար ՀՀԴ	ԿՓ ուղղվածությունը
1.	«Ոռոգման ցանցի ստեղծում, հողագործության ծավալի մեծացում»/ երաշտների և ոչ եկամտաբերության պատճառով չմշակվող հողերի ծավալի մեծացում	50 000	Հարմարվողականություն
2.	«Փամբակ համայնքի Չորագետ բնակավայրի համայնքային շենքի ամրացման և տանիքի կապիտալ նորոգում» /Մշակույթի կենտրոնի ստեղծման հեռանկարով/	59 000	Մեղմում
3.	«Մանկապարտեզների վերանորոգում և գույքով ապահովում»	45 000	Մեղմում
4.	«Փամբակ համայնքի Դեբետ բնակավայրում մանկապարտեզի կառուցում»	170 000	Մեղմում
5.	«Աղետների ռիսկի կառավարում, գետի հունի ամրացում, սելավատարերի մաքրում»:	17 000	Հարմարվողականություն
6.	«Փամբակ համայնքի գիշերային լուսավորություն» /ԼԷԴ լուսատուներով/:	65 000	Մեղմում
7.	«Փամբակ համայնքի կոմունալ ծառայության հիմնում և զարգացում»/աղբահանության կազմակերպում, միջբնակավայրային և հանդամիջյան ճանապարհների մաքրում/	222 300	Մեղմում
8.	«Բնապահպանական ծրագրեր, ծառատունկերի կազմակերպում» /անտառային ծածկույթի ծավալների մեծացում, տեղի բնակլիմայական պայմաններին համապատասխան դիմացկուն տնկիների տնկում/:	25 000	Հարմարվողականություն
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	2 336 300	

## 11. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ընդգրկված է «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցության» երկրորդ փուլի ծրագրում և «Հայաստանի կենդանի լանդշաֆտները շուկայի

զարգացման համար» ծրագրում: «Հարավային Կովկասում էկոլոգիական միջանցքների ստեղծման աջակցության»-II ծրագիրը ֆինանսավորվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) կողմից՝ KfW բանկի միջոցով, իսկ «Կենդանի լանդշաֆտները շուկայի զարգացման համար Հայաստանում» ծրագիրը ֆինանսավորվում է Շվեյցարիայի կառավարության կողմից՝ Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության միջոցով (SDC): Ծրագիրը նպատակ ունի գործնական եղանակով համակցելու բնության պահպանությունը տնտեսության աճին, որպեսզի այն տեղի բնակչությանը տեղական բնական ռեսուրսների առավել տնտեսական և կայուն շահագործման եղանակով բերի եկամուտներ՝ առանց վնասելու այդ տարածքները: Ծրագիրն իրականացվում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Հայաստան) կողմից՝ «Ռազմավարական, զարգացման գործակալություն» և «ԷկոԼուր» ՀԿ-ների հետ համագործակցությամբ:

## 12. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ Փամբակ համայնքը խոցելի է կլիմայի փոփոխության նկատմամբ: Համայնքում շատացել են հիդրոոդրոկլիմայի վտանգավոր երևույթները՝ կարկուտը, հեղեղներն, սելավները, հողի դեգրադացումը, ինչից տուժում է հողագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը:
- ✓ Համայնքապետի աշխատակազմը բնական (կլիմայի փոփոխության հետևանքով առաջացող վտանգավոր հիդրոոդրոկլիմայի երևույթներ) և արհեստածին (հիդրոտեխնիկական կառույցների, մետաղական հանքանյութի վերամշակման պոչամբարների և տեխնիկական ջրերի պարզեցման ավազանների, ՓՀԷԿ-երի գլխամասային ջրընդունիչների տեխնիկական անվտանգության պահպանման համակարգերի վթարներ) աղետների դիմակայման համար չունի վաղ ազդարարման համակարգերի և դիմակայման ներուժ:
- ✓ Գյուղացիները 2024 թվականի դրությամբ չեն կարողանում իրականացնել գյուղատնտեսական ապահովագրություն 1 հա-ից փոքր հողատարածքներում, քանի որ կա սահմանափակում ապահովագրական ընկերությունների կողմից, արդյունքում գյուղացին չի կարող պաշտպանվել այնպիսի կլիմայական ռիսկերից, ինչպիսիք են կարկուտը, ցրտահարությունը, երաշտը, խորշակը և այլն:
- ✓ Փամբակ համայնքը պատրաստակամ է միանալ ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին և ստանալ փորձագիտական աջակցություն՝ ուժեղացնելու կարողությունները և մշակելու ռազմավարություններ ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանն ուղղված ծրագրերի իրականացման համար:
- ✓ Համայնքի տարածքում նախատեսվող միջոցառումները և ծրագրերը պահանջում են ավելի հստակ գնահատականներ ջերմոցային գազերի արտանետումների կրճատման տեսակետից:
- ✓ Լինելով անտառամերձ և աղքատ բնակչությամբ համայնք՝ մեծ է նրա ճնշումը մերձակա անտառների վրա, ինչի արդյունքում զգալի են ապօրինի անտառահատումները և անտառային տարածքների կրճատումը: Անգամ սանիտարական հատումներն արվել են խախտումներով:

- ✓ Անտառային թափուկի ծավալը կրճատվել է, բնակիչներին 8 խմ-ի փոխարեն առաջարկվում է 3 խմ թափուկ:
- ✓ Համայնքն ունի անտառտնկման և բազմամյա էներգետիկ տնկարկների ստեղծման պոտենցիալ:
- ✓ Կլիմայական և կանաչ էներգետիկ ուղղվածությամբ զարգացման համար համայնքը կարիք ունի միջազգային դոնոր կազմակերպությունների և «կանաչ» հիմնադրամների ֆինանսական աջակցության:
- ✓ Ընդերքօգտագործողները չեն կատարել համայնքի զարգացմանը միտված սոցիալական պարտավորությունները:
- ✓ Ազդակիր համայնքը գրկված է իր համար կարևոր սոցիալ-էկոլոգիական պահանջներն ընդերքօգտագործման պայմանագրերում ամրագրելու հնարավորությունից:
- ✓ Գյուղատնտեսական նշանակության հողի կատեգորիան փոփոխելիս՝ այդ հողերը կլիմայական տեսանկյունից չեն գնահատվում, հաշվի չի առնվում հողերի բերրիության, հողում կուտակված ածխածնի կորուստը:
- ✓ Գյուղատնտեսական հողերը լիարժեք չեն օգտագործվում:
- ✓ Առկա է կախվածություն ավանդական գյուղատնտեսությունից:
- ✓ Բնակիչներն ունեն խորհրդատվության կարիք՝ դիմակայելու կլիմայի փոփոխությանը գյուղատնտեսության ոլորտում:
- ✓ Համայնքը կարիք ունի միանալու օրինակելի և կառավարելի աղբավայրերի հիմնման ծրագրերի, ինչպես նաև նախկինում ինքնակամ առաջացած աղբակույտերի չեզոքացման:
- ✓ Համայնքում էներգախնայողության և կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածությունը չափազանց ցածր է:
- ✓ Կանայք թույլ են ընդգրկված կլիմայական և էներգետիկայի ծրագրերում, որպեսզի պաշտպանեն իրենց շահերը:
- ✓ Արևային ինքնավար էլեկտրակայանների արտադրած ավելցուկային էլեկտրաէներգիան, որը վաճառվում է ՀԷՑ-ին, դեկտեմբերի 31-ից հաշիվները գրոյացվում են ՀԷՑ-ի կողմից: Բնակիչները հնարավորություն չունեն իրենց անունով արտադրված ավելցուկային էլեկտրաէներգիան ձմռան ամիսներին օգտագործել և խթանել արևային էներգետիկայի զարգացումը գյուղական բնակավայրերում՝ նվազեցնելով ճնշումը անտառի վրա:
- ✓ Համայնքի զարգացման ծրագրով նախատեսվող միջոցառումների իրականացման համար պահանջվող ներդրումները հնարավոր չէ ապահովել համայնքային բյուջեի սուղ միջոցների հաշվին:
- ✓ Բնակչությունն անվճարունակ է:
- ✓ Խմելու ջրի և ոռոգման ցանցի խողովակաշարերը մաշված են:
- ✓ Գործող բիզնեսի՝ համայնքի տարածքում շահագործվող ՓՀԷԿ-երի և ընդերքօգտագործող կազմակերպությունների՝ համայնքի նկատմամբ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մակարդակն անբավարար է:
- ✓ Համայնքի բնակավայրերն անհամաչափ են զարգացում:
- ✓ Էներգախնայող բնակարանային շինարարությունը զանգվածային չէ:

## **Համայնքի կայուն զարգացման հնարավորություններ**

- Համայնքի տարածքում շահագործվող ՓՀԷԿ-երից և ընդերքօգտագործող կազմակերպություններից ֆինանսական միջոցների ակնկալիքներ էներգախնայողության և կլիմայի փոփոխության հարմարվողականության և մեղմման ծրագրերի իրականացման համար:
- Էներգետիկ աղքատության նվազեցման նպատակով համայնքային նշանակության սեփական արևային կայանի/հողմային կայանի կառուցման հնարավորություն, ինքնավար արևային կայանների, ջրատաքացուցիչների ներդրման խթանում:
- Կլիմայակայուն գյուղատնտեսության զարգացում և դրա հիման վրա գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնում:
- Զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմանների առկայություն՝ պատմամշակութային հարուստ ժառանգություն, էկոլոգիապես մաքուր գյուղմթերքի արտադրություն, անտառապատ տարածքների առկայություն:
- Վերականգնվող էներգետիկայի զարգացման և կլիմայական ուղղվածության ծրագրերի շնորհիվ միացում ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին և փորձագիտական աջակցության ստացում:

### 13. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՓԱՄԲԱԿԻ ՏԻՄ-ԻՆ<sup>27</sup>

1. Կլիմայի փոփոխության ազդեցության մեղմման տրամաբանության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում համայնքի տարածքում գործող վերականգնող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող կայաններ շահագործող ընկերությունների հետ կնքել համագործակցության պայմանագրեր համայնքային էներգախնայողությանն ու կլիմայի հարմարվողականությանն ուղղված ծրագրերի իրականացման համար ընկերությունների կողմից մասհանումների վերաբերյալ:
2. Համայնքային բյուջեի ծախսային մասում ներառել «տարվա բնապահպանական, կլիմայական, էներգետիկ ծրագրերի, աղետների ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացման ծախսեր» բաղադրիչը:
3. Էներգետիկ աղքատության կրճատման, բնական, արհեստածին աղետների և կլիմայի փոփոխության ազդեցությունների մեղմման, դիմակայման ու կանխարգելման համար ստեղծել մասնագիտական խումբ: Այդ խմբի համար սահմանել լիազորությունների, պարտականությունների և պատասխանատվության կոնկրետ շրջանակներ: Բացել էներգետիկ կառավարչի հաստիք:
4. Համայնքապետարանի աշխատակազմում ձևավորել ֆոնդ՝ միջազգային ծրագրերին մասնակցության համար տարվող աշխատանքները մասնագիտական կառույցներին պատվիրակելու համար:
5. Ստեղծել նախադրյալներ ՀՀ կառավարության «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների ծրագրին, էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի 2022-2030 թվականների

<sup>27</sup> Փաստաթղթով առաջարկվող օրենսդրական փոփոխությունների և լրացումների առաջարկները ներկայացվելու են ՀՀ կառավարություն քննարկման համար:



- ծրագրի առաջին փուլի (2022-2024 թվականներ) իրագործումն ապահովող ծրագրի 54-րդ կետով նախատեսվող արևային, հողմային, ինչպես նաև կենսազանգվածային էներգիայի կայանների ծրագրերի իրականացման համար համագործակցելու մասնավոր հատվածի հետ՝ վառելափայտի պահանջարկը նվազեցնելու և այն վերականգնվող էներգիայի աղբյուրներով փոխարինելու նպատակով:
6. Համայնքի զարգացման հնգամյա և սուբվենցիոն ծրագրերը մշակելիս հաշվի առնել կլիմայի փոփոխության մեղմման, հարմարվողականության և վերականգնվող էներգետիկայի ոլորտի պետական քաղաքականության տեղայնացման կարևորությունը և բնակչության իրական կարիքները, համայնքում սոցիալական արդարության ու էներգամատչելիության ապահովումը, այդ միջոցառումների ծրագրերի մշակման գործընթացում ապահովել հանրության բավարար մասնակցության բաղադրիչները:
  7. Տանել աշխատանքներ ԵՄ Քաղաքապետերի դաշնագրին միանալու ուղղությամբ:
  8. Հնգամյա զարգացման ծրագրում և տարեկան աշխատանքային պլաններում ներառել էներգետիկ մշակաբույսերի աճեցման և բազմամյա էներգետիկ տնկարկների հիմնադրման ծրագրեր, արոտավայրերում խմոցների ստեղծման և արոտավայրերի ու դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման, ինչպես նաև ջրահեռացման աշխատանքներ:
  9. Մշակել արոտավայրերի օգտագործման և պահպանման միջոցառումների պլան՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների՝ «Բնակավայրերի համար կլիմայի փոփոխության և հարմարվողականության ծրագրերի մշակման վերաբերյալ» մեթոդական ուղեցույցի:
  10. Վերականգնվող էներգետիկայի բիզնեսի կողմից հաստատված բնապահպանական և սոցիալական ազդեցությունը մեղմող հիմնական միջոցառումների պլանների կատարումը մշտադիտարկելու համար ստեղծել աշխատանքային խումբ համայնքապետարանին կից հանրության մասնակցությամբ:
  11. Համայնքի զարգացման «Փամբակ համայնքի կոմունալ ծառայության հիմնում և զարգացում» ծրագրով նախատեսված աղբի կառավարման միջոցառումները համապատասխանեցնել Լոռու մարզում նախատեսվող կոշտ կենցաղային թափոնների կառավարման աղբավայրի երկարաժամկետ ծառայություններում ինտեգրվելու համար:
  12. Մշակել բնակավայրերի աղբահանության միջոցառումների պլան, ինչը կապահովի անկառավարելի աղբակույտերի չեզոքացումը, համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության անխափան կազմակերպումը:
  13. Կլիմայական և «կանաչ» էներգետիկայի ծրագրերի իրականացման համար տանել աշխատանքներ միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության ոլորտում:
  14. Էներգախնայողության և կլիմայական քաղաքականությունների վերաբերյալ կազմակերպել և իրականացնել իրազեկման միջոցառումներ համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների, բնակչության համար:
  15. Համայնքի բնակչության սոցիալական վիճակի բարելավման, եկամուտների բարելավման համար համայնքի տարածքում հատկացնել գյուղմթերքի վաճառքի կիրակնօրյա շուկաների կազմակերպման տարածքներ գյուղամթերքների իրացման

խրախուսման նպատակով, ապահովել շուկաների գովազդը, այս հարցում ֆինանսական աջակցություն ստանալու համար դիմել միջազգային դոնոր կազմակերպություններին:

16. Բարձրացնել կանանց ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում և կլիմայական և էներգետիկ ծրագրերում:

17. Ֆինանսական ռեսուրսներ նախատեսել նոր տեխնիկական միջոցների տեղադրումից հետո դրանց պահպանման և վերանորոգման ծախսերի համար:

**Փամբակ համայնքի վարչական տարածքում շահագործվող ՓՀԷԿ-երը և դրանց հիմնական բնութագրչները**

h/h	Ընկերության անվանումը	ՓՀԷԿ-ի անվանումը	Լիցենզիայի համարը	Լիցենզիայի գործողության ժամկետը	Հզորությունը, կվտ	Էլեկտրական էներգիայի փաստացի միջին տարեկան օգտակար առաքումը, մլն. կվտ/ժ	Ջրաղբյուր	Դերի վաճառքի երկարությունը. մ
1.	«Լեռ և ջուր» ՍՊԸ	«Արջուտ»	76	19.11.2031	500	1,56	Լեռնապատ-Դարբաս ջրանցք	10000
2.	Լեռ և ջուր» ՍՊԸ	Արջուտ-2»	140	30.07.2034	700	3,47	Փամբակ	1880
3.	«Մավր» ՍՊԸ	«Չանախչի ՀԷԿ-2»	232	22.01.2037	1700	1,92	Չանախչի	1240
4.	«Լեռնապատի Կանթեղ» ՍՊԸ	«Լեռնապատ ՀԷԿ-1»	283	07.05.2023	549	0,81	Լեռնաջուր գետի Ղարաչորան վտակ	3180
5.	«Ապահով տանիք» ՍՊԸ	«Վահագնի»	378	03.11.2025	1200	6,5	Փամբակ գետի Տանձուտ վտակ	16200
6.	«ԶՈՐԱԳԵ Տ ՀԻԴՐՈ» ՍՊԸ	«ԶորաՀԷԿ»	384	20.12.2025	26400	77,04	Զորագետ	

Ընդամենը	6				31 049	94,36		35226
----------	---	--	--	--	--------	-------	--	-------

## Հավելված 2

### Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ու մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ

<p><b>Կլիմայի փոփոխության հարմարվողականությանն ուղղված միջոցառումների օրինակներ</b></p> <p><i>Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումներն ուղղված են կլիմայի փոփոխության բացասական հետևանքների մեղմմանը և դրանց նկատմամբ հասարակության դիմակայունության բարձրացմանը:</i></p>	<p><b>Կլիմայի փոփոխության մեղմմանն ուղղված միջոցառումների օրինակներ</b></p> <p><i>Կլիմայի փոփոխության մեղմման միջոցառումներն ուղղված են ջերմոցային գազերի արտանետումների նվազեցմանը:</i></p>
<ol style="list-style-type: none"> <li>1. Բնական աղետների ռիսկերի կառավարման պլանների մշակում ու իրականացում</li> <li>2. Հողային և ջրային ռեսուրսների արդյունավետության բարելավում, կառավարման ենթակառուցվածքների զարգացում</li> <li>3. Համայնքային անտառների, խոնավ տարածքների և գետերի ափամերձ տարածքների պաշտպանություն</li> <li>4. Կայուն օրգանական գյուղատնտեսության զարգացում՝ մշակաբույսերի սորտերի փոփոխություն, ոռոգման ժամանակակից մեթոդների կիրառում, ջրամբարաշինություն</li> <li>5. Կայուն քաղաքաշինություն՝ կանաչ տարածքների ավելացում</li> <li>6. Առողջապահական համակարգերի կարողությունների զարգացում՝ կլիմայի փոփոխության հետ կապված հիվանդությունների կանխարգելման և կառավարման միջոցառումների մշակում, իրականացում</li> <li>7. Էներգախնայողության նոր տեխնոլոգիաների զարգացում, վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում</li> <li>8. Միջազգային համագործակցության ընդլայնում՝ կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների մշակման և իրականացման, փորձի փոխանակման և տեխնոլոգիաների</li> </ol>	<ol style="list-style-type: none"> <li>1. Հանածո վառելիքի օգտագործման նվազեցում, վերականգնվող էներգիայի աղբյուրների տեսակարար կշռի ավելացում համայնքային և անհատական սեկտորում</li> <li>2. Էներգաարդյունավետ տեխնոլոգիաների կիրառում համայնքային շենքերում և ծառայությունների և տնային տնտեսություններում /շենքերի ջերմամեկուսացում, էներգաարդյունավետ ջեռուցման և հովացման համակարգերի օգտագործում, էներգախնայողություն/</li> <li>3. Օրգանական թափոնների կոմպոստացում, սննդային թափոնների նվազեցում, անտառահատված տարածքներում գյուղատնտեսական աշխատանքների բացառում</li> <li>4. Գյուղատնտեսական թափոններից բրիկետների արտադրության կազմակերպում</li> <li>5. Անասնապահության թափոններից օրգանական պարարտանյութերի արտադրություն</li> <li>6. Անտառահատումների կանխում, անտառվերականգնում, անտառապատում</li> <li>7. Թափոնների տեսակավորում և վերամշակում, աղբավայրերից ջերմոցային գազերի արտանետումների վերահսկում</li> <li>8. Հեծանիվների և հետիոտնի համար ենթակառուցվածքների զարգացում,</li> </ol>

<p>փոխանցմանն ուղղված գործողությունների իրականացում</p> <p>9. Համայնքի իրազեկման բարձրացում կլիմայի փոփոխության և դրա ազդեցության վերաբերյալ, տեղեկատվության տարածում</p> <p>10. Գյուղատնտեսական արտադրությունում հիդրոօդերևութաբանական վտանգավոր երևույթների բացասական ազդեցությունը մեղմող միջոցառումների իրականացում</p> <p>11. Անասնակերի որակի բարելավման և արտադրության ծավալների ավելացմանն ուղղված տեխնոլոգիաների ներդրում</p> <p>12. Համայնքում հեղեղումների և սելավների վաղ ազդարարման համակարգերի ներդրում</p>	<p>Էլեկտրական մեքենաների և էկոլոգիապես մաքուր այլ տրանսպորտային միջոցների օգտագործում:</p> <p>9. Կլիմայի փոփոխության մեղմման մասին հանրության իրազեկության բարձրացում:</p>
---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------